



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

4846

9(47.925)  
7-29

1879

## ԴԱՐ-ԸՆԻՉՁԵՒԱՆԻ

ՀՊՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

## Q u i c k h i l p

162


9. *pbq*

U P H L P H U

Արտաստպած «ՓՈՒԶ» հանդիսից

የኢትዮጵያ

ՀԱՅԻԱՁԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ- ՏՊԱՐԱՆ.



9 (44-925)

7-29

4

## ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒՄՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

*¶ u n i l n i p h i l a p*

1004

ՍԻՒԼԵՒԿ



© 1998 Lulu.com

Հ. ԿԱՖԻՆԱՃԵՍԱՆՑԻ ՆԻ ԸՆԿ- ՏՊԱՐԱՆ.

1879

12954

Дозволено цензурою. Тифлисъ. 20 января 1879 г.

ՆՈՐ - ՆԱԽԻԶԵՒԱՆԻ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻ

Տ Օ Կ Ա Խ Մ Բ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ը

1879-ինոյեմբերի 14-ին Նոր-Նախիջևանը կատարեց իւր հիմնակրութեան հարիւրա ամեայ տարեղարձը շատ համեստ եղանակաւ, այնքան համեւո, որ մինչև անզամպաշտօնապէս չը կարողացաւ իւր տօնախմբութեան անունը Յորելեան<sup>1)</sup> գնել:

<sup>1)</sup> Յորելեան, jubilum, annus jubilaeus, կասուի այնպիսի տօնախմբութիւն, որն կը կատարաւի որպիսի և իցէ նշանաւոր անցքի 10, 25, 50 կամ 100 ամեայ տարեղարձի օրը. Հին ժամանակուայ Հրէաները կը կատարէին սովորաբար յիսուն տարիէն ետե՛ փողեր (կուռնա) հնչեցնելով. նոցա լեզուով եօպէլ կը նշանակէ եղջերափող (կոտոշէ զուռնա):

Դեռ ևս տարի մի առաջ քաղաքական խորհրդարանի մէջ խօսուած էր այս տօս նախամբութեան փառաւոր կերպով կատարելու մասին։ Զանազան մարդոց կողմաէն առաջարկուած էր երեք խնդիր, թէ արդեօք այս արժանայիշատակ օրը անմահացնելու համար ի՞նչ պէտք է անել, 1. կանգնեցնել արդեօք Նկատարինէ կայսերուհին արձան, 2. թէ կանգնեցնել կոթող (օԵԵԼՍՔԵ) Երկայնաբազուկ րդութեան և պիսակոպսին, 3. թէ, վերջապէս, Նոր-Նախիջևանի մէջ հիմնել արուեստական դրաբոց։ Այն ժամանակուայ քաղաքակ ն ժողովը որոշելէր այսպէս։ Ա. ընտրել երկ-երշ կու տեղական չքառոր հայ աղջիկներ և տղաներ, քաղաքական հաշուով տալ նոցակրթութիւն, առաջիններին անուանել Ես կատարինէի սանիկներ, իսկ երկրորդներին՝ Յովսեփայ Արդութեան, Բ. տալ շարադրել և տպել Նոր-Նախիջևանի պատմութիւնը,

խոստանալով հեղինակին իբր վարձատրութիւն մի չափաւոր գումար։ Իսկ տօնախըմբութեան փառաւոր ծէսը ի՞նչպէս կատարելու մասին ոչինչ յիշուած, ոչինչ կարգադրուած չէր։

Այս խորհուրդը կայացած օրէն անցաւ ուղիղ մի տարի, և այդ միջոցին խորհրդարանի մէջ կատարուած որոշմունքը համարեա թէ ամենի մոքէն ելաւ. և հարիւրամեայ տարեղարձին հազիւ քանի մի օր մնացած յիշուեցաւ, որ Նախիջևանի հարիւրամեակը մօտացելէ և պէտք է այն տօնել։ Հապձեպով քաղաքական խորհը դարան կազմուեցաւ, հասգձեպով կարեոր անեկը բաներու որոշմունքը եղաւ, հապձեպով մսխելու փողի մասին մասնաւոր հանգանակութիւն բացուեցաւ. և հապձեպով այդ ծանրակշեռ ազգային տօնախմբութիւնը կատարուեցաւ։ Աչա այս պատճառաւ Նոր-Նախիջևանի հիմնարկութեան

Հարիւրամեայ տարեդարձը կատարուեցաւ  
չափազանց համեստ և անշուք կերպով:

Թէև, այո, տօնախմբութիւնը շատ  
համեստ (քիվ) և անշուք էր, բայց նորա  
հետևանքը, յուսալի է, շատ բեղմնաւոր  
և ճոխ կըլինի:

Այս անդամն քաղաքական ժողովը այս  
պէս որոշեց տօնել Նախիջւանի հարիւր  
ամեայ տարեդարձի յիշատակը, Ա. հիմ  
նել քաղաքիս մէջ չքաւոր հայ տղայոց  
համար արուեստական գպրոց, Բ. նկարել  
տալ Նկատարինէ կայսերուհիի և Յովսէփի  
արքեպիսկոպոսի պատկերներն և դնել մինն  
քաղաքական խորհրդարանի մէջ և միւսը  
մի այլ յարմարաւոր տեղ, Գ. եկեղեցական  
փառաւոր ժամասացութիւններով ժողու  
վրդին յիշեցնել թէ հիմնարկողների ան-  
մահ յիշատակները և թէ ներկայումս կե-  
ցողների անքուն և անխոնջ հսկողութիւնը,  
և Դ. մասնաւոր զոհաբերութեամբ կա-

տարել հայկերոյթ, խնջոյք և պարա-  
հանդէս:

Վերջին ժամանակներս բոլոր Նախիջւան-  
ցոց մտաւոր լարումնը դարձած է երե-  
խայոց զաստիարակութեան ու կրթու-  
թեան և վարժարաններ հիմնելու վրայ.  
իսկ հիմնելի վարժարանների մէջ, նայե-  
լով տեղական հանգամանքներին, առանց  
այլեայլութեան, առաջին տեղը ունի ռա-  
րուեստական զպրոցը:

Քառասուն տարիէ ՚ի վեր Նոր-Նա-  
խիջւանը, կորցնելով իւր մէկժամանա-  
կուայ հռչակաւոր առուտուրը, և մանա-  
ւանդ նորա միջնակարգ ժողովուրդը իւր  
արդիւնաւոր ձեռարուեստներէն հրաժա-  
րուելով և խանութպանութեան խախուտ  
շահերէն խաբուելով, բաւականին շատա-  
ցրելէր իւր մէջ չքաւորների և աղքատ-  
ների թիւը, այնպէս որ՝ ժամերի սան-  
դուղքները և փոքրիշատէ ունեոր մարդոց

բակերը լիքն էին մուրացկաններով։ թէ և  
այս ցաւալի պարագան ամէնքի աչքի առա-  
ջևն էր, բայց ոչոք չունէր այնքան բա-  
րոյական ոյժ և հաստատուն կամք, որ  
միանդամով վերջ զնէր այս տեղական  
դժուարաբոյժ ցաւին։ Պէտք է բարեխղճաբար  
խոստովանել, որ այժմեան քաղաքազլուխ  
Միքայէլ կարապետեանը, պաշտօն  
առած առաջին օրէն շտապեց այցելել մեր  
կրտսեր եղբայրներուն։ Այո՞, նա իւր պաշ-  
տօն մտնելու առաջին օրէն հզօր զարկ  
տալով «աղքատաց հոգաբարձուների»  
գործունէութեան, ժամանակաւ պիտի ա-  
պահովէ չքաւորների և մուրացկանների  
հանապաղորդեան կարիքը. բայց սյդ դեռ  
ևս բաւական չէ. դա կը նշանակէ շարա-  
ւաթոր վէրքի վրայ միայն ամոքիչ սպեղանի  
(Մէ հլէ մ) դնել և ոչ թէ արմատաքի  
բժշկել այն։ Աթէ պ. կարապետեանը կարու-  
ղանայ արուեստական դպրոցի զաղափարը

մարմնաւորացնել, այն ժամանակ միայն  
մենք կ'ասենք, որ նա աղքատների զա-  
ւակաց ձեռքը տուաւ հնար՝ իրենց չքա-  
ւոր վիճակին դուրս գալու։ Ուրեմն՝ կարի  
հարկաւորէ հիմնել քաղաքիս մէջ մի ա-  
ռանձին արուեստական դպրոց, և արուեստ  
սովորելը պիտի անել նորա մէջ ամեն ա-  
շակերտի համար ստիպողական։

Եւ այսպէս, քաղաքական խորհրդարանի  
որոշմամբ, նոյնեմբերի 14-ին առաւօտեան  
ժամը 10-ին զօղանջեցին Լուսաւորիչ մայր  
եկեղեցւոյ զանգակները, հրաւիրելով բաւ-  
րեպաշտ ժողովրդին եկեղեցի, ուր խուռն  
բազմութիւն տեղացի հայերուն՝ արք, կա-  
նայք և տղայք, ժողովուեցան և նոցա հետ  
բաւական շատ օտարազգի աստիճանաւոր-  
ներ և պաշտօնատարներ հրաւիրանքով  
եկելէին։ Յետ պատարազին կարդացուեցաւ  
միքարող, յետոյ կատարուեցաւ մաղթանք  
օգոս տափառ կայսեր և նորա գերդաստա

Համար, յետոյ՝ հոգեհանդիստ ՚ի Տէր հան-  
գուցեալ Նկատարինէ կայսերու Հիմ համար;  
Ժամը 1-ին ձայնաւորք և հրաւիրեալք  
գնացին տեղական քլուպն, որ զարդա-  
րած էր բաւականին շքեղ կերպով. պա-  
տերի և սիւների վրայ տեղէ տեղ կային  
ծաղիկներով շինած սկզբնատառերը ա-  
նուանց այն թագաւորներուն, որոնք զա-  
նազան ժամանակ հաստատել էին Նախի-  
ջևանի արտօնագիրը՝ մէջը նշանակած ա-  
մաթիւը և ամամթիւը: Խակ բոլոր դահ-  
լիճը, բաւականին սիրուն ձաշասեղանը  
զարդարուած էին ծաղիկներով ու դոյն-  
զզոյն գրօշակներով: Բազմաթիւ հրաւի-  
րեալները հաղիւ տեղաւորուած էին քրուպի  
ահազին դահլիճումն և ուրիշ բաւականին  
մեծ սենեակներումն:

Ժամը 2½ - ի մօտ տումայի նիստը  
կայացաւ, ուր բաւականին տաք հակա-  
ճառութենէ յետ, ընտրուեցան երեք ան-

ձինք, որոնք պիտի կաղմեն առանձնաժողով  
և մշակեն արուեստական դպրոցի էացնելու  
խնդիրը:

Զայնաւ որների նիստը վերջանալէն յետ՝  
հոգևորականաց դասը հոգեհանդիստ կար-  
դաց ՚ի Տէր հանգուցեալ Յովսէփի արքե-  
պիսկոպոսի յիշատակին, յետ որոյ քա-  
զաքազրուխը կարդաց ռուսաց լեզուաւ Նա-  
խիջևանցոց գաղթականների պատմութիւնը  
և ապա Ռուսականնեանը կարդաց հայե-  
րէն մի համառօտ ճառ:

Ճառախօսութիւններէն յետ քաղաքա-  
զլուխը և նորա հետ շատ ձայնաւորներ և  
հրաւիրեալներ դուրս ելան, ուր ժողովուած  
էր խուռն ամբոխ քաղաքացիներու, նոցա  
կանանց և որդոց, և ուրիշ տեղերէ եկած  
մարդիկ, և շնորհաւորեցին նոցա Նախի-  
ջևանի հարիւրամեակը: Երաժիշտները  
նուազեցին ազգային օրհներգութիւն աջէր,  
եցո՞ զթագաւորնս. ժողովուրդը և ձայ-

նաւորները՝ քանի քանի անզամ՝ օդը  
թնդացրին «կեցցէներով»:<sup>1)</sup> ՚ի վերջ ամե-  
նայնի, հրաւիրեալք վերադարձան դէպի  
դաշլիճը, նստան սեղան և վայելեցին բա-  
ւականին անպահոյձ ձաշ:

Ճաշի վրայ առաջարկուեցան յետագայ  
նշանաւոր կենաց բաժակները՝ Օգոստափառ-  
կայսեր, Կայսերուհիի, Թագաժառանդին,  
Օգոստափառ գերդաստանին, Վեհափառ  
կաթողիկոսին, Կղմիածնայ Հայոց — Անօ-  
դին, Նախիջևանցոյ արանց և կանանց և  
շատ ուրիշներին:

Դիեռ ևս ձաշը շաւարտած Ամբրոսիոս վ.  
Ռուբինեանը ուրախ և յազեցած նախի-  
ջևանցոց միտքը բերեց նոցա Հայաստանցի  
եղբարց տիրալի և հացակարօտ վիճակը,  
յորդորեց ըստ կարելոյն նպաստել Արգ-  
րումի մէջ հիմնուելու և Հողակործական  
դպրոցին։ և բաւականին խոշոր գումար  
ովեց տեղն ՚ի տեղ:

Մութը որ կոխեց՝ քաղաքը զարդա-  
րուեցաւ ծրագավառութիւնով և տեղ տեղ-  
բենդալական կրակներ վառեցին։ Իսկ միւս  
օր, ի պատիւ Նախիջևանցի կանանց և օ-  
րիորդաց, կատարուեցաւ պարահանդէս  
Այսպէս տօնուեցաւ Ն. Նախիջևանի հիմ-  
նարկութեան հարիւրամեայ տարեդարձը:

### ՄԵԾԱՐԳՈՅ ՔԱՂԱՔԱԿԻՑՆԵՐ

Այս օրս, որ մենք Նոր - Նախիջևան-  
ցիքս, մեզ շրջապատող 5 բազմամարդ  
գեղերու և եղարքս և այլ մեր ուրիշ  
եղբարք, որոնք զանազան ժամանակ և զա-  
նազան տեղեր գաղթեցին մեր քաղաքն,  
այս օրուայ օրս, կը կրկնեմ, ամենքս միա-  
ւորուած մասամբ մարմնաւորապէս և մա-

<sup>1)</sup> Նախիջևանի յրջապատած հինգ հայ գե-  
ղերն սորա են՝ Զալթը, Մեծ - Սալա, Սուլ-  
Բան - Սալա, Թօփտի և Նիսվիթա կամ Սուրբ  
Կարապետ:

ուամբ հողեռապէս, այս ամենամեծ և  
ամենանշանաւոր տօնը, պէսպէս անակըն-  
կալ դիակուածներու պատճառաւ, կը կա-  
տարենք շատ և շատ համեստ եղանակաւ։  
Բայց ես ուրախ եմ այդ համեստ արտա-  
յայտութեան մեր ամենահզօր զգացմուն-  
քին։ Համեստութիւնը մեր նախիջևան-  
ցոց կեանքի նշանաբանն է։ մեր սիրական  
Նախիջևանը համեստ շինուեցաւ, համեստ  
կեանք ունեցաւ, համեստ ծլեցաւ ու ծաղ-  
կեցաւ հարիւր տարի։ Համեստութիւնը  
մեր նախորդների ոյժն ու պարծանքն էր,  
և նյժն համեստութիւնը պիտի լինի մեր  
յետնորդների ասպաւէնը և փառքը։ Աթէ  
միայն մեր այդ առաքինութիւնը ժառան-  
գեն մեր որդիք, նոքա շատ և շատ հա-  
րիւրամեակներ պիտի տօնեն՝ երեսները  
պարզ և հողիները անդորր (ռ.ա.հ.աթ)։

Մեծարգոյ քաղաքակիցներ, մեր հայ-  
րերը պանդուխտ եկան այս ամսի և ան-

մարդաբնակ տեղերը, և իրենց արիւն-  
քրտինք և անխառնջ աշխատանքով մեզ  
համար ապահով կեցութիւն, կեանքի  
կարգ-կանոն և սուրբ աւանդութիւններ  
թողուցին, որոնք պիտի լինին մեզ, նոցա  
յետնորդների, համար փրկաւէտ Տասնաբա-  
նեայ Պատգամք։ Օրհնելով ուրեմն յիշենք  
միշտ նոցա բարի անունները, չմոռանանք  
նոցա առաքինի վարքը, նոցա կեանքի ե-  
ղանակը մեզ օրինակ առնունք—և այդ  
կը լինի ամենաապահով առհաւատչեայ  
մեր ապագայ երջանկութեան։ Մեր պա-  
պերը փշալից Ճանապարհով անցուցին  
իրենց կեանքի ասպարէզը։ Նոքա ամէն  
կերպ դժուարութիւնք կրելով մեր առջե-  
կեանքի Ճանապարհը հարթեցին։ Զի մո-  
ռանանք նոցա պատկառելի անունները և  
մեր որդոց ու թոռներին թողնենք նոցա  
բարի յիշատակը. ասենք միաբերան և Աս-  
տուած լուսաւորէ մեր պապերու հողին։

ասենք միաբերան և կեցցեն մեր ետեհն եւ կող մեր զաւակները ։ Թող նոքա ևս մեզ պէս բաղդաւոր լինին. միւս հարիւրամեակը որ տօնելու լինին, ունենան այն բաղդը, որ մենք ունեցանք, — այդ բաղդն է՝ «մալ հայ ազգութեամբ, մնալ հաւատարիմ որդի սուրբ Եջմիածնի և մնալ հաւատարիմ պարզերս հպատակ իրենց ժամանակացից թաղաւորին. վասն զի հայերու հագուազիւտ պարծանքներէն մինն էլ այն է, որ ուր և եղելէ հայը՝ ամեն տեղ նորա անունը հռչակուելէ իրը ռտիւրասէր»: Երկրորդ անգամ կը կրկնեմ «Աստուած լուսաւորէ մեր պատերու հոգին. կեցցեն, ծին ու ծաղկին Նոր - Նախիջեւանցիք և մեր յետնորդները շատ ու շատ հարիւրամեակների արժանի լինին՝ բաղդաւոր և պարզերս, և պահպանն հայ ազգի անունը գոված ու փառաւորած օստար ազգերու մէջ»:

ՈԱՓՍՅԵԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ



ՆՈՐ - ՆԱԽԻՋԵՍԻԱՆԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ\*)

Այս օրուայ օրս (1879-ի նոյեմբերի

14-ի) Նոր - Նախիջևանը կը կատարէ իւր բնակիչներու. Խրիմի թերակղզիէն գէպի գոնի ափը զաղմելու և այնտեղ հաստատուն բնակութիւն դնելու հարիւրամեակը:

Խնչպէս որ ամէն մարդ մի նշանաւոր ժամանակ իւր կենդանի մնալուն, և այդ

\*) Այս պատմութեանս առանձին արժանաւորութիւնը այն է, որ սա հիմնուած է տեղական աւանդութեանց և արժանահաւատ ծերերի բարեխիղճ բերանացի պատմածքի վրայ. Հատքան ես լսել եմ Պ. Պ. Գէորգ Խաթրանեանէն, Սլմէօն Ալածալեանէն և այլ շատերէն, որոնք թող ընդունին իմ խորին չորհակալութիւնը.

ժամանակամիջոց իւր որևէ բարոյական գործունէութիւն ցոյց տալուն ոչ միայն ինքը կ'ուրախանայ, այլ և օտարները նուրան այդ հաղողագիւտ բաղդին խնդակից կը լինին, այնպէս և ամէն քաղաք, ամէն հասարակական օգտաւէտ հաստատութիւն որևէ շատ կամ սակաւ ժամանակամիջոց անյողգողդ մնալուն՝ իւր հիմնողի համար պատճառ է մի առանձին ուրախութեան:

Մեր քաղաքը ահա հարիւր տարի է որ կայ. մենք այսօր ուրախ ենք այդպիսի բաղդի համար, և մանաւանդ այն մասսին, որ մենք այսօրուայ ներկայ գտնու ողներս նորա մէջ՝ ունեցանք բաղդ տեսնել այն, որին ոչ մեր պատերը արժանացան և ոչ մեր թռուերէն շատերը զուցէ, պիտի արժանանան: Հարիւր տարիէն ովկը կը լինի ովկը լինի՝ Աստուած զիտէ. մեր Նախիւնան քաղաքը կը մնայ արդեօք այլ ևս հարիւր տարի, և եթէ մնայ, նա կը լինի՝

արդեօք, ինչպէս որ այժմ է, հայերով և միայն զուտ հայերով բնակուած քաղաք. այդ ամենը ծածկուած է անյայտութեան մառախուղով:

Մենք ուրախ ենք, որ այս օրուայ օրին հասանք. մենք մեր ուրախութիւնը յայտնեցնք և պիտի յայտնենք նախ՝ մեր Ստեղծողին. առիսրտէ շնորհակալ լինելով նորան, և փառաբանելով նորա սուրբ անունը. յետոյ մենք հրաւիրեցինք մեր հեռաւոր եղբայրներուն խնդակից լինել մեզ, և վերջապէս մեր հոգւոյ հրձուանքին առաւել ասպարէզ տալու համար միտքերս բերինք մեր փոքր եղբայրներուն, լցնելով նոցա վրայ մեր ձեռքէն եկած լաւութիւնները, հացնելով նոցա մերով սանն թեթևութիւն և հիմնելով պէսպէս հասարակաց օգտաւէտ հաստատութիւն. այդ ամենը մենք արինք և կ'անենք այն դիտմամբ, որ մեր զաւակներին և թռու-

ներին թողնենք յիշատակ, թէ մինչեւ ՞ր  
աստիճան մեծ էր մեր ընդհանուր ուրա-  
խութիւնը:

Հարիւր տարի կեցանք մենք այս նոր  
գաղթած երկրի մէջ: Այս միջոցին մենք  
ի՞նչ արինք, ի՞նչ նշանաւոր գործ յա-  
ռաջացուցինք, որով պարզերես կարող լի-  
նէինք երևելու կամ մեր ուրիշ տեղ բնաւ-  
կուած համազգիներուն, կամ օտար ազ-  
գերուն և ասել նոյց, որ 'ի զուր կեցած  
չենք աշխարհիս երեսին:

Ե՛ղայրներ, ով որ չզիտէ մեր քաղաքի  
պատմութիւնը, նա կարողէ մեզ ամաւ-  
չայնել, որ մենք այսքան շատ աարիներու  
մէջ շատ քիչ բան յառաջացուցինք. բայց  
ով որ բանի վրայ ոչ հարեւանցի, այլ  
խորին զննութիւն կ'անէ, նա ակներեւ կը  
տեսնէ, որ մենք շատ բան արինք թէ  
ընդհանուր մարդկութեան և թէ մասնա-  
ւորապէս մեզ համար, այսինք այնքան,

որքան ոչ մի ազգ, եթէ մեր տեղը և  
մեր հանդամանքի մէջ լինէր, աւելի անել  
չէր կարող. մենք կարող ենք համարձակ  
ասել, որ ամենք արինք այնքան, որքան  
ուժերս հասաւ և մեր անյաջող հանդա-  
մանքները թոյլ տուին:»:

Դառնանք սլատմութեան, նայենք մենք  
ովէինք, ի՞նչպէս մեր ոտքը հազարաւոր  
մզոնների և բիւրաւոր արդելքների մէջն  
մենք զրինք այս երկիրը, ուր սորանէն հա-  
րիւր տարի առաջ 'ի սկզբանէ աշխարհի  
եղել է վայրի զաղաններու և կիսավայրինի  
մարդոց բնակութեան տեղ:

Տասներերեքերորդ դարուն կործանուե-  
ցաւ Հայոց Բաղրատունեաց թագաւորու-  
թիւնը. շքեղաշուք Անի քաղաքը իւր  
հազար և մի եկեղեցիներով և անհամար  
շրջակայ գիւղերով մնաց անտէր, կատաղած  
արինածարաւ թշնամին, սովը, մահա-  
րաժամը և երկրաշարժը սկսան ամեն

կողմէն հարուածելու և հալածելու հայ ազգին. բայց երբոր առուտուրն ևս փոխեց իւր ճանապարհը, գործունեայ հայը տեսաւ որ այլ ևս մարդկային հնար և կարողութիւն չի կայ իւր հայրենիքի մէջ կենալու: Հայաստանը սկսաւ ամէն կողմէն դատարկուելու. Հայերը խմբվին սկսան դուրս երթալ հայրենի երկրէն, ոմանք դէպի հիւսիս, այլք դէպի հարաւ. իսկ Շիրակ դաւադի բնակիչները, այսինքն՝ Նոր-Նախիջևանցոց նախորդները, գնացին նախ Եթիլ (Վ.օլլա) ասած գետի եղերը թաւթարի Ոսկի-Խարայ ասած քալաքը և այնա աեղէն ուղեղ գնացին դէպի Խրիմ: Այս որ կասեմ, օրէս 600 տարի առաջ կատարուած բան է:

Երբ որ մեր պապերը Խրիմ հասան, նոքա առաջին նուագ կարծեցին թէ գտել են իրենց սիրական հարազատ Շիրակ գաւառը. վասն զի ես ինքս բաղդ ունեցայ

աչքովս տեսնելու, որ կլիմայական մեծ նմանութիւն կայ հայրենի Շիրակի և օտար Խրիմի մէջ, — նոյն պտղաբերութիւնը հոգին, նոյն յատկութիւնը ջրին և նոյն բարեխառնութիւնը եղանակներուն: Մեր պապերը Խրիմ — ատասին ցայն աստիճան սիրեցին, որ կամեցան բոլորովին դարձնել այն իրենց համար նոր հայրենիք, և որպէս զի հինի կարօտը այլ ևս չի քաշեն՝ հիմնեցին նորա մէջ նոյն անուամբ գիւղեր, վանքեր և եկեղեցիներ. \*) ևս առաւել կ'ասեմ՝ նոքա բանը այսուեղ հասուցին, որ մի կարձմիջոցի մէջ սկսան առանց որ և է նշանաւոր փոփոխութեան նոյն կեանքը վարելու օտար Խրիմ-ատասիմի մէջ, ինչ կեանք

\*) Գաղթական խրիմցիները (Նոր-Նախիջևանցոց պապերը) Գօնի ափ տեղափոխուելով, նոյն բանը արին Նոր-Նախիջևանայ և Աջակայքի մէջ:

որ կը վարէին հարազատ Անիի մէջ և նորա  
շըջակայ տեղերը: Այս բանին ես ինքս ա-  
կանատես վիայ եմ:

Հայ ազգը, պէսք է ճշմարիտը խոս-  
տովանել, մի զարմանալի յատկութիւն ունի,  
որից զուրկ են աշխարքիս երեսը կեցող  
ամեն ազգեր. հայը ուր և երթայ, երբ որ  
միանդամ սիրեց իւր բնակած տեղը, այն-  
պէս շուտ հիմք կը դնէ այնտեղ, այնպէս  
խորունկ արմատներ կը ձգէ, այնպէս շուտ  
կը ծի կը ծաղկի և իւր չորս քովի ամայի  
անապատը այնպէս շուտ կը ծաղկեցնէ ու  
կը կննդանացնէ և ինքը իւր ընտանիքով  
այնպէս կը բարեբաղդուի ու կը բազմանայ,  
որ աշխարհ կը զարմացնէ և օտարներու  
կատաղի նախանձը բարկութիւնը կը շար-  
մէ իւր դէմ:

Բնանը այսպէս կը պատահի: Կուզայ մէկ  
հեռաւոր գեղ, կամ մէկ քաղաք, կամ  
մէկ աշխարք մէկ հայ մարդ, նախ և ա-

ռաջ վեզը ծռած, երեսը տրտում և ինքը  
ամեն կերպ թշուառութենէ հալածուած,  
և ամենի գութը կը շարմէ իւր վրայ:  
Վրայ մէկ տարի անցած չանցած մեր  
ծուռ վեզ հայը արդէն ունի մի փոքրիկ  
առուտուր. միւս տարի, նայես, այդ մարդը  
արդէն ընտանիք ևս ունի. այլ ևս մի  
տարի անցած՝ նորա ընտանիքը փոքրիշատէ  
ասպահովուած են. այնուհետեւ քանի կեր-  
թայ՝ այդ հայի գործը աւելի և աւելի  
կը բարւոքուի. քանի մի ժամանակէն, նայես,  
մին մինի ետեկ կուգան ուրիշ հայեր և  
նցն տեղումը կը սկսեն իրենց գործը հիմ-  
նելու. և կարդի կանոնի բերելու: 10—20  
տարիէն այդ հայերը այնքան կը շատանան,  
որ քահանայ, տիրացու և հայ վարժապետ  
կը բերեն և հայոց եկեղեցի կը շինեն այն  
տեղն. իսկ նորակազմ ժողովրդի գործը  
գնալով գնալով այնպիսի յաջողութիւն  
կը ստանայ, որ այնտեղի բնիկները կը սկսեն

այդ նորեկ հայերին նախանձել, չարամտել,  
վրաները հաղար ու մէկ սուտ ամբաստա-  
նաւթիւններ անել: Ինչո՞ւ: Դորա պատճառը  
այն է, որ մեր հայը աչքաբաց մարդ է,  
մեր հայը կորչելու մարդ չէ, ինչպէս որ  
մի անհատը, այնպէս ևս ամբողջ ազգը:  
Այնուհետև կը սկսուի բնիկ ժողովոդի կող-  
մանէ ընդհանուր հալածանք մեր խեղճ  
հայի դէմ: Նորան կ'անուանեն խարդախ,  
էքսփլու աթաթօռ, այսինքն օտար  
մարդոց իւր շահերի համար ծառայե-  
ցնող կը խլեն հայէն նախ զանազան ար-  
տօնութիւնները և յեսայ կը խլեն նորա  
մարդկային իրաւունքներն ևս:

Ահա կարձիկարձոյ պատմութիւնը մեր  
հայ գաղթականութեան թէ Պարսկաս-  
տանի, թէ Տաճկաստանի, թէ Լեհաստանի,  
թէ Խրիմի, թէ Աւստրիայի և թէ Հնդ-  
կաստանի մէջ:

Թէ՛ւ Հայաստանը երբէք հանգստու-

թիւն ունեցած չէ իւր ոխերիմ թշնա-  
միներէն — Պարսիկներէն, Յոյներէն և Արաբ-  
ներէն. բայց մեր աշխարհի վերջին կոր-  
ծանման պատճառը եղաւ Խալինւխ ազգը,  
որ XII դարուն մարախի (Էլիրիկէ) նման  
փռուեցաւ բոլոր Ասիայի և Եւրոպայի մէջ.  
Նոր որ ստքը դրեց թագաւորութիւններ  
կործանեց, քաղաքներ այրեց, աւերեց և  
հողի հետ հաւասարեցուց: Ժողովոդին  
հարիւր հազարներով մորթեց, կնիկները  
ու ակջիկները գերի տարաւ, և նոցա ունե-  
ցածը իրեն սեպհականութիւն դարձուց:

Խալինւխ ազգը, որ Եւրոպային յայտնի  
է զանազան ժամանակ երբեմն Հոնք, եր-  
բեմն Մուղալ կամ Մօնղոլ, երբեմն Խա-  
զար և երբեմն Թաթար անունով, քանի  
քանի տեղ հաստատեց մէկմէկէ անկախ  
խանութիւններ, որոնց մէջ նշանաւորներն  
են՝ Խրիմի խանութիւնը, Ոսկի-Սարայի խա-  
նութիւնը, որ կար Վոլգա կամ Կմիլ գե-

տի ցածի կողմերը և Խազանի խանութիւնը: Հայերը որ ամեն յաղթուած ազգերու մէջ ամենէն աչքաբացն էին, բարի համարեցին խոհեմութեամբ զլուխները ծռել, քան թէ անվերջանալի և անպտուղ կոիւ ունենալ յաղթող խա նոյն հետ. նոքա շուտ հասկացան բանի էռւթիւնը. անմիջապէս սկսան բարեկամական յարաբերութիւններ կապել նոյա հետ, և այդ կերպով թաթարներու ձեռքը զըտնուած երկիրներու մէջ դարձան զլիաւոր և ամենածարպիկ վաճառականներ, և քիչ ժամանակուայ մէջ նոյա կողոպտած հարստութեանը իրենց արդար վաստակով տէր եղան:

Ա՞ր պապերը գուրս գալով Անի քաղաքէն և նորա շրջակայ տեղերէն, նախ քաշուեցան Ռակի-Սարայ, Վոլգա գետի մօտ և ապա խմբովին գնացին, ինչպէս վերը յիշեցինք, Խրիմ-ատասի ասած տեղը, ու

նոքա յոյս ունէին ոչ միայն ծաղկած առուտուր ունենալ, այլ և Խրիմի պատուական հողի վրայ հաստատուն բնակութիւն հիմնել, և բացի առուտուրէն ուրիշ օգտաւէտ զբաղմունք ևս ձեռք բերել, ինչւ պէս զորօրինակ՝ հողազործութիւն, այդեւ գործութիւն, պարտիզանութիւն, խաշնարածութիւն, զանազան ձեռարուեստներ, և այլն, և այլն, և այլն, մինչ Վոլգայի մօտ գտնուած արօտատեղինների վրայ մնալով, նոքա կարող էին միայն թափառական կեանք վարել, ինչպէս որ կը վարեն մինչեւ այժմ խալմուխները, խըռախրզները և ուրիշ վրանաբնակ խաշնարած ազգերը: Այժմ, յուսամ մեզ հասկանալի եղաւ, թէ ինչո՞ւ մեր պապերը, իրենց աշխարհէն, Անիէն, գուրս գալով՝ եկան և թաթար ազգերու դրաւած երկիրներու մէջ զաղթեցան:

Երբ որ անեցիք մեր պապերը Խրիմ-ատասի ոսք զրին, անմիջապէս փուռեցան

նորա բոլոր քաղաքների մէջ . գուցէ ինքան ևս նոր նոր քաղաքներ շինեցին այնտեղ (պատմութիւնը այս մասին պարզ չետասկ) և իրենց ազգային սովորութեամբ շինեցին եկեղեցիներ, կարգի կանոնի բերին առուտուրը, Աիրէյ խաներէն գանազան իրաւունքներ և արտօնութիւններ ստացան և զիսաւորապէս ամբուցին այն քաղաքները, որոնք ծովի (Սև ծովի և Ազախի ծովի) մօտ գալով խիստ յարմար էին նոցա առուտուրին, և մանաւանդ նոքա խիստ քազմացան և հզօրացան Քէֆէ (Ֆէօդոսիա) ծովեզերեալ քաղաքի մէջ . և հազիւ թէ երկու հարիւր տարի անցել էր այն օրէն, երբ նոքա որբի և նժդեհի նման ոտքերը գրել էին Խրիմ, յանկարծ նոքա օտարութեան մէջ ցայն աստիճան հզօրացան, որ XV XVI դարերու մէջ Խրիմը կասուէր Armenia maritima, որ կը նշանակէ՝ Ծուգային Հայաստան։ Խրիմի մէջ հայերը ուշ

նէին ոչ միայն անթիւ եկեղեցիներ, վանքեր ու զիւղեր, այլև հայոց գօրք և հայ ամրոցապետ, ք օ մէն տան թ։ Վիտողը միտքը թող բերէ Գարբէլ ամրոցապետի և նորա Շուշան անունով կնկայ ումանթիւ քական և աղետալի պատմութիւնը։

Ի հարկէ, գուք լսած կը լինիք, որ թէ Խրիմի, թէ Երևանի զաւառի և թէ Ղարսի Նահանդի ռուսներէն տռնուելու զիսաւոր պատճառը հայերն էին. և կան մարգիկ, որ մեզ հայերուս այդ մասին կը բամբասեն։ Ըստ զիսպաց այդ և այդպիսի բամբասանքներուն ես կը կամենամ այս տեղ երկու խօսք ասել։

Հայոց ազգի բնաւորութեան մէջ երկու բան նկատուած է. մէկ որ՝ հայերը որեւէ տիրող ազգի ամենահաւատարիմ ծառաներն են. և երկրորդ՝ հայերը եղան պատճառ կործանման շատ ազգերու թափաւորութեան։ Այնպէս չէ որ այդ երկու,

իրար հակառակ բանի մէջ կայ իրբ թէ  
անհասկանալի հակասութիւն։ Եթէ ա-  
ռաջինը մեր ազգին մեծ պատիւ կանէ,  
երկրորդը, ընդհակառակն, սաստիկ ան-  
պատւութիւն է մեզ։ Բայց իրօք այդպէս  
չէ։ Հայ ազգը ծաղկեցուց Պարսկաստան,  
Տաճկաստան, Վրաստան, Հնդկաստան, Լե-  
հաստան, Խրիմ-ատասի, և այլն. և դար-  
ձեալ հայ ազգը եղաւ զիսաւոր պատ-  
ճառը անկման Պարսկաստանին, Տաճկաս-  
տանին, Վրաստանին, Խրիմին, և այլն։  
Եթէ հայի առաջին գործը, այսինքն՝ իւր  
կեցած աշխարքը ծաղկեցնելը և նորա կա-  
ռավարութեան հաւատարիմ հպատակ  
լինելը գովիլի է, ուրեմն երկրորդը, այսինքն  
կործանման պատճառ լինելը պախարակելի  
է, այնպէս չէ։ Ոչ. հայ ազգը ոչինչ  
մեղք չունի այդտեղ։ Լսեցէք մեկնու-  
թիւնը։

Հային ճանաչելով հեղ, աշխատասէր,

շխակ, ճարպիկ ժողովուրդ, ամեն օտար-  
ազգի թագաւոր զանազան արտօնու-  
թիւններով իւր աշխարհը կը հրաւիրէ,  
որ նա գայ և իւր խելքով, ձեռքի ճար-  
պիկութիւնով և տնտեսական կառավարու-  
թիւնով ոչ միայն ծաղկեցնէ իւր երկիրը,  
այլ և իւր համազգի հպատակներին քա-  
ղաքականապէս դաստիարակէ և կրթէ իւր  
կենդանի օրինակով։ Հայը, ինչպէս վերը  
յիշեցինք, մի կարճ ժամանակի մէջ, ոչ  
միայն իւր տնական գործը կը բարւոքէ,  
այլ և երկրի գանձին և հարստութեան  
աէր կը գառնայ ու կը հզօրանայ, և ընդ  
նմին հաւատարիմ կը մնայ իւր կրօնին և  
ազգային աւանդութիւններուն։ Հայը չի  
խառնուիլ օտար ազգի հետ, արհամար-  
հելով նորա խոստացած ամէն հրապուրիչ  
օգուանները և իւր ազգութիւնը չի ուրա-  
նալ։ Այս հանգամանքը, որ ինքը ըստ  
ինքեան շատ օրինաւոր և զովիլի բան է,

խեղճ՝ հային կասկածելի կը դարձնէ օտար  
ազգերու աչքին. նախանձը և անհիմն եր-  
կիւղը կը ստիպէ նոցա վատ աչքով նայելու  
հայերի վրայ. իսկըբան նոքա զաղուկի, և  
ապա յայտնապէս կը սկսին հալածել հային նեղել,  
տուած արտօնութիւնները յետ  
լովել, մէկ խօսքով երեկուայ իրենց բարե-  
կամին և ամենահաւատարիմ հպատակին  
այսօր թշնամի և հաւատադրուժ կը ճա-  
նաշեն. արդարութեան գռները կը փակեն  
նորա առջեւ, ձեռքի հարստութիւնը ծա-  
ծուկ կամ յայտնապէս կը յափշտակեն  
խեղճէն. նորա լիկողին, մինչեւ անգամ նո-  
րան հրապարակի մէջ սպանողին իբր թէ  
չաեսնողս կը ձեւանան և կատաղի զագանի  
նման կը հալածեն նորան: Այս դառն վի-  
ճակի մէջ ի՞նչ կը մնայ անել ողորմելի  
հային: Ո՞չ ապաքէն մի հղօր ազգի  
պաշտպանութիւնը գտնել այդ իրեն հա-  
լածող ազգի և իշխանի դէմ: Ահա ին-

չով կը մեկնուի Ոռուսերու գէպի Խրիմ  
արշաւանքի մի մասն ևս:

**Այսպէս՝** հայը կործանեց Վրաստանը  
պարսից ձեռքով, Պարսկաստան՝ ոռուսաց  
ձեռքով, Խրիմը՝ տաճկաց ձեռքով և Տաճ-  
կաստանը՝ գարձեալ ոռուսաց ձեռքով:  
Հայը ի՞նչ մեղաւոր, որ նորա տէրերը  
ոչ զլուխներու մէջ խելք և ոչ սրտերու  
մէջ գութ չունին: Ուրիշ ի՞նչ կը մնար  
անել հային:

**Այս** օրէս ուղիղ հարիւրեւտասը տարի  
առաջ, այսինքն 1769ին Ոռուսաց Եկատա-  
րինէ կայսերուհին պատերազմ յայտնեց  
Տաճկաստանին. Խրիմը այն ժամանակ Օս-  
մանցիներու ձեռքի տակ էր վասարալա-  
կան յարաբերութեամբ: Առաջին նուագ  
ոռուսաց զօրքը աղատեց Խրիմը տաճկաց  
ձեռքէն, իսկ երկրորդ անգամ Խրիմը ոռու-  
սաց սեպհականութիւն դարձաւ: Ահա այս  
երկրորդ անգամին էր, որ հայերը ցանկու-

թիւն ունեցան գաղթելու Խրիմէն և իրենց ցանկութիւնը կատարեցին։ Յաւիտենական մոռացման տանք մի քանի անձանց առուններ, որոնք իրենց անցաւոր փառքի, պատուի և մանր շահերու համար մի ամբողջ ծաղկած ժողովրդի վիճակը և ապագան մահու վտանգի մէջ ձգեցին. նույացա դատաւորը թող լինի անաշառ պատմութիւնը, իսկ նոցա պատուհանը՝ ապաց սերնդի յաւիտենական եպերանքը։ Այսօրուայ օրս խօսելու բան չէ՝ լաւարին, թէ վաս. բայց ինչ արին, ինչ չարին՝ բանի վերջը այն եղաւ, որ նոքա թողդուցին իրենց ծաղկեալ վիճակը, թողուցին իրենց բարեկազմ առուտուրը, թողուցին իրենց մեծ և արդիւնաբեր կալուածները և 1776ին ելան տեղերէն<sup>1)</sup> և մի տարիի

<sup>1)</sup> Գաղթականները ոչ ամենքը միասին դուրս եկան Խրիմէն, այլ մասն մասն, և ոչ միմոյն

չափ թափառելով զանազան տեղեր և մի ձմեռ անցնելով Նկատերինոսլաւ գաւառի Սամար (այժմուայ Նօվօ - Մօսկօվիքը) ասած տեղը, անտանելվ նեղութիւններ կրելով, 1777-ին եկան այժմուայ Նոր - Նախիջևանի տեղը՝ Դօնի աջ և բարձրադիր կողմը և ստանալով իրենց խոստայած արտօնագիրը (փրի վելլի կիան) օրինապէս հիմք դրին քաղաքին 1779-ին։ Ոչա այդ նշանաւոր օրէն մինչեւ այս օ-

ժամանակ, այլ մի քանիսը շատ առաջ, իսկ միւսները շատ յետ. և ոչ ամենքը միաբան էին այդ մասին, այլ էկսը նոցանէն կ'ուզէր գաղթել և էկսը չուզէր. գաղթականութեան դրդիչ պատճառը (շարժառափթը) ոչ ժողովրդի նեղութեան, այլ մի քանի խորամանկ աղաների և եկեղեցականների փառասիրութեան մէջ էր գաղթականները մեծ ու անդառնալի նիւթագան և բարոյական վասներ ունէին։ Այսպէս է առհասարակ խելօք, բան հասկացող ծերերի կարծիքը.

րուայ օրս անցաւ ուղիղ հարիւր տարի,  
որ մենք այսօր կը տօնենք մեծ ուրախու-  
թեամբ և մեծ հանդէսով։

Աւանդութիւն կայ, որ ի հարկէ, դուք  
ամենքդ ևս լսած կը լինիք, որ մեր պա-  
պերուն թոյլ տուած էր նոր գրաւած եր-  
կիրներու մէջ ուր և կամենան՝ բնակուին;  
և մեր պապերը յատկապէս այս տեղը  
ընտրեցին երեք պատճառաւ, նախ որ՝ Դօնի  
ձուկը շափազանց առաստ էր <sup>1)</sup>), երկրորդ՝  
Գօնի կազմած կղզիի (ատա) վրայ բուսած  
եղէզը (խամիշ) անպատմելի շատ էր, իսկ  
երրորդ՝ աղբիւրի (<sup>չօռ խալս</sup>) ջուրը իւր  
համով կը յիշցնէր նոյա Խրիսի անուշ  
ջրերը, որին սովորել էին <sup>2)</sup>):

<sup>1)</sup> Հին մարդոց թողած աւանդութեամբ Դօնի  
ձուկը այնքան առատ էր, որ ոչ թէ ուռկա-  
նով կամ ակիշովք կը բռնէին, այլ հասարակ  
թիով կ'առնուին ձուկը ջրէն և ցամաք կը  
ձգէին։

<sup>2)</sup> Նախիջնանի աղբիւրի (<sup>չօռ խալսի</sup>)

Կախիջնանի Հասարակի կազմութեամն  
մի հանգամննք ևս մեծապէս նպաստու-  
մատոյց եղաւ, որի վրայ մենք այնքան ու-  
շադրութիւն չենք դարձրել, որքան որ  
պէտք էր: Կարդացողին ձանձրութիւն չը  
պատճառելու համար՝ ես կարծ խօսքով կը  
մեկնեմ այդ հանգամնքի որպիսութիւնը,  
որ մի օր մեծ լոյս պիտի ծագէ մեր տե-  
ղական պատմութեան վրայ, մանաւանդ  
անցեալին։

Ինչպէս շատերուն յայտնի է, XVIII  
դարը երեւելի է Փրանսիական ազգի մէջ մի

---

ջուրը, իւր մէջ պարունակելով կրային մա-  
սունք, զործածողներին, բժշկների ասելով,  
օգտաւէտ է այն մասին, որ պահպանում է անդ-  
լիական ցաւէն, որի զիսաւոր պատճառն է  
մարդուս ուկորների մէջ կրային բաղադրու-  
թենէ զուրկ վիճելը: Իսկ լուացքի, պարտէզ  
ոռոգելու և թէյ պատրաստելու համար շատ  
վատ յատկութիւններ ունի նա:

նոր փիլիսոփայութիւն ծագելով, որ նաև խապատրաստեց ստրկացած ժողովրդին պահանջել թագաւորներէն հպատակներու համար այնպիսի օրէնքներ, որով կարող լինէին նոքա առաւել երջանիկ վիճակի հասնելու:Այդ փիլիսոփաները պատմութեան մէջ յայտնի են Էնցիքլոպեդիստների (Encyclopediste) ընդհանուր անունով, ուրոց մէջ զլաւաւորներն էին՝ Վոլթէրը, Ժան - Ժաք - Ռուսսօն, Դալամբէռը, Դիդոսն, Մօնթէսքիւն և Հարիւրաւոր ուրիշները, որոնք մերձաւոր բարեկամ և մշտական թղթակից էին Մեծ Եկատարինէին, և միշտ խորհուրդ կուտային նորան փոխել իւր հպատակների կառավարութեան ձեր: Երբոր գրեթէ Սւրոսկյի ամեն թագաւորներն կը հալածէին այդ փիլիսոփաներուն, միամիայն հեռատես Եկատարինէ կայսերուհին հասկացաւ նոցա իմաստուն գաղափարները: Նոցա տուած շատ ուրիշ խորհրդների մէջ

ջէն իմաստուն կայսերուհին երկու բանի վրայ առանձին ուշադրութիւն դարձուց: Նախ՝ բազմացնել իւր հպատակներութիւը և երկրորդ՝ տալ նոցա այնպիսի կառավարութիւն, որ մօտիկ լինէր նոցա առօրեայ պիտոյքին, սովորութեանց և մտաւոր զարգացման. և այդ նպատակաւ նա հրատարակեց «Հրահանդ» նոր Օրէնսդրութեան» գրուածքը, որի իմաստը այն էր, որ ամէն ժողովուրդ իւր երեսփոխանների ձեռքով ինքը զրէ իրեն հարկաւոր օրէնքները և իւր ընտրած մարդոցմով կառավարուի: Այս բանի հիման վրայ է, որ մեր պապերը հրապուրուեցան թողնել Խրիմը և Ռուսաստան գաղթել, և բարեխօսութեամբ ու զործակցութեամբ Արդութեան Յովսէփ արքեպիսկոպոսին և վեհազնեայ Լազարեանց, ինչպէս կ'երևի պատմական աղօթերներէն, ստացան իրենց հոչակաւոր արտօնապիրը որն բերեց նոցա Պետրոս վարդապետը և

նորա հետ գնացած ուրիշ երեսփոխաններ, և որով կառավարուեցան Նոր - Նախիշեանցիք մօտ ի մօտոյ 80.85 տարի:

Ո՞ւր պատերը Խրիմ-ատասիէն դուրս գալով, իսկոյն չի հասան այժմեան մեր կեցած տեղը. նոքա բաւականին ժամանակ տեղէ տեղ աստանդական թափառեցան՝ իրենց համար ըստ ամենայնի յարմար տեղ վնդրելով, և ինչպէս որ արդէն մի անդամ միշեցի, նոքա Սամար ասած տեղը ձմեռ անցուցին և անհամար գերեզմաններ ետեւներէն թողուցին: Աւանդութիւնը կ'ասէ թէ Խրիմէն գաղթողները 15,000 հոգի էին, իսկ Նախիշեանի հողի վրայ հասնողները միայն 2000 տնւորք՝ այսինք մօտ ի մօտոյ 7000 հոգի. կը նշանակէ կէսէն շատ պակաս: Քաղաքների և տների յարմարութեան ընտելացած հայերը երկար միջոց ստիպուած էին ամսյի անսպատճերի մէջ կենալ և խարխուլ սայլերի (թաւ-

լիքէ) մէջ պատսպարուիլ թէ ամառուայ անտանելի տօթին<sup>1)</sup> և թէ ձմեռուայ անհանդուժելի բուքին<sup>2)</sup> ու սառնամանիքին<sup>3)</sup>: Ցաւալի՛ պատկերներ, աղետալի՛ պատմութիւններ: Ինչ և իցէ: Բանի վերջը այն եւդաւ, որ մեր ողորմէլի պապերը հասան իրենց աւետեաց երկիրը և հիմքը (թէ մէլ) դրին Նոր - Նախիշեանին:

Եկաւոր հայերն էին Քէֆէ, Խարասու, Պահէխարայ, Կէօղէվ, Ախ - Եար, Օր, Էսկի - Խըսըմ և ուրիշ քաղաքներէն և նոցաշղակայ գեղերէն: Ամէն քաղաքացի կ'ուզէր իւր համար ջոկ (պախշա) թաղի (մահաւա) մէջ կենալ. բայց ամենքն ևս աչքերը ձգել էին Սուրբ - Նիկոլոսի թաղին, և կ'ու-

<sup>1)</sup> Տօթ, ամառուայ սաստիկ տաքը, — <sup>2)</sup> Բուք, քամիով ձիւն գալը, պօռան, <sup>3)</sup> Սառնամանիք, ձմեռուայ սաստիկ ցուրտ, չաթլամայեազ:

զէին այնտեղ շէնել իրենց տուները։ Սորա  
ակներև պատճառը այն էր, որ Ստամպօվի  
և Տրապիվոնի նաւերը (կ է մի) կուգային և  
ուղեղ Դօնի այնտեղի եղերքի (ք էն ար) մօտ  
խարիսխ կը ձգէին։ Մեր պատերը մեզմէն  
շատ լաւ հասկացելէին ծովային առուտուրի  
անթու եկի օգուտները։ Քէֆէցիք որովհէնետն  
Խրիմյի գաղթականներու մէջէն ամենէն ա-  
կանաւորները (պ է լլ ե) կը համարու էին,  
առաւելասիս կը ցանկային ձեռք ձգել այդ  
թաղը։ Իսկ միւնները յօժար չէին։ մէջերը  
ընկաւ կագ ու կոյիւ և անբաւականութիւն։  
Հարկ եղաւ ընդհանուր հաւանութեամբ  
վիճակ ձգելու։ Զգեցին վիճակը (շու-  
պաղա), որ ընկաւ Պահշխարայցիներու  
վրայ. Քէֆէցիները սկսան վիճելու (Ճ էն կ  
անել), թէ վիճակը անարդարութեամբ  
ձգուելէ. նորէն ձգեցին վիճակ և նորէն  
Պահշխարայցիներու բաղզը բանեցաւ. և  
այդ կեպով բաղդաւոր Պահշխարայցիները

բնակուեցան Սուրբ-Նիկողոսի թաղը. իսկ  
մնացածները տեղաւորուեցան ընդ երկայնու-  
թիւն դօն գետին (ե ալին), առաւել ջրի  
մօտ հիմնելով իրենց տուները։ Գանի մի  
տարիէն, կ'ասէ տեղական աւանդութիւնը,  
գետի միւս ափէն, զիշերով, աւազակներ  
եկել են, մոել են մի նշանաւոր մարդու  
տուն, բոլոր բնակիչներին սպաննել են և նոցա  
ինչքը կողոպտել են (թալնել են). և այդ  
չարաշուք արկածքէն (պ է լա) վախեցած,  
այնուհետեւ նախիջևանցիք թողել են գետ-  
ափը (ե ալին) և քաշու ել դէպի վեր.  
այնու ամենայնիւ այժմուայ մազիսարատէն<sup>1)</sup>

1) Տէրութեան նոր կարգադրութենէն յետ  
Ն. Կախիջևանի դատաստանական գործերը  
ենթարկուելուց փոփոխութեան, առաջուայ  
դատարանը, մազիսարատը, ևս դատարկուե-  
ցաւ, և նորա շէնքի մէջ այժմ զետեղուած է  
Ռատիկանութիւնը (Փ օ լիցիան), բայց ժո-  
ղովուրդը, ըստ հին սովորութեան, դարձեալ  
մազիսարատ կ'ասէ։

վեր գնացած չեն: Պարոն Խաթռանեանի  
տունը եղել է առաջուայ չէ թին (գաշ-  
տավայր) տեղը՝ իսկ բժիշկ Տիգրանեանի  
տան տեղը, քաղաքէն դուրս լինելով,  
նշանակուած է եղել գործարանների (զա-  
վօտ, փապոիքա) համար: Այժմուայ  
շուկան ասուել է Շոռ - պազար, բայց մէջը  
առուտուր եղած չէ: Առաջուայ շուկան  
(պաղար) գտնուել է Սուրբ Նիկողոսի  
թաղը, ժամէն դէպի վայր:

Խրիմյի գաղթականները հետերը շատ  
մեծ հարստութիւն բերած չեն, բայց ա-  
մենքը ընդհանրապէս հետերը բերել են  
շատ պղնձէ (փախըռէ) ամաններ և, ըստ  
երեսյթին, այդ է եղել շատերի միակ հա-  
րստութիւնը: Պահչեսարայցիներէն քա-  
նիսը ունեցել են խաշինք (ոչխարի սիւրիւ).  
իսկ Քէֆէցիները ունեցել են Ստամպօլի և  
Անատոլուի (Փոք - Ասիա) հետ առուտուր,  
որից դադարած չեն նաև Խրիմյն նաւ-

խիջեան աեղափոխուելով: Մինչև Մոսկովի  
հետ սերտ յարակցութիւն ունենալը Ստամ-  
պօլէն բերել են այն ժամանակուայ երեւ-  
ելի կերպասները (Խումաշ), ինչպէս՝  
Մանիցա - ալաճա, Շամալաճա, Խութնի,  
և այլն, իսկ Խարէն (մուտուէ) կը բերէին,  
եղել է, Լեհէն: Լեհը, թէև մեր իմացա-  
ծովը փօկեաք կամ փօյլշ կը նշանակէ,  
բայց մեր պապերը Պարտիչովա (Բերդա-  
շեր) կամ նորա մօտի երկիրները կը հաս-  
կանային:

Մեր պապերը զուտ ոսկիով և արծա-  
թով կարելի է այնքան հարուստ չէին,  
բայց ոսկի ապրձանը ձեռքերը ունէին  
միշտ: Խրիմյիք երեւելի արուեստաւորներ  
էն իրենց ժամանակի համար: Նախիջեան  
30 - 35 տարուայ քաղաք էր, որ արդէն  
ունէր վեց եկեղեցի, մի վանք, դատարան  
(մագիստրատ), անհամար խանութներ

ու կրպակներ և երեւելի վաճառոց<sup>1)</sup> (պէտքէսթէն): Նշանաւոր հարուստները (զէնակին) արդէն տասներով կը համարուէին մէջերը, իսկ միջակ հարստութիւն շատերը ունէին: Խազբան նախիջեանի մէջ գրեթէ եղած չեն չքաւոր, աղքատ, մուրացկան: Այս փարթամութիւնը գտնելին մեր պատերը ոչ շնորհով առուտուրին, այլ արուեստին: Այն ժամանակուայ արուեստաւորներն էին՝ ոսկեթել ժապաւինագործ (ուրբմաքէշ), կաշեգործ (սէտիճի),

1) Նախիջեանի մի ժամանակուայ հռչակաւոր և այժմ անշքացած և դատարկուած վաճառոյը շինել է Աբրամեան անունով մի ազնուական, որն յետոյ նորանէն գնել է Պօղոս Խաթրանեանը. Նախիջեանի նախկին առուտուրը գովելու համար կը պատմուի, որ պէզէստէնի մէջ խանութ ունենալու համար մարդիկ մինչեւ հաղար ոռութիւն կէ տիք կուտային մին մինի:

հիւսն (տիւրկէր), քարահատ (թաշշէճի), կղմինտրագործ (քիրէմիճի), ասողիւսագործ (թուլաճի), խաղախորդ (տապախ), կօշկակար, մուծակագործ (թիքիճի), ջրհոր փորող (խուլիճի), երկաթագործ, դարբին (տէմիրճի), անագագործ (խալայճի), ոսկերիչ (խուչիմճի), մնանետիկ (տէլլալ), հացագործ (փուռուռնճի), համետագործ (սարաճ), և այլն, և այլն, և այլն:

**Այսուեստաւորները** ունեցել են իրենց էսնաֆը և իրենց էսնաֆ-պաշին որն կընտրուէր ընդհանուր հաւանութեամբ և կը կատարէր նոցա դատը ու դատաստանը: Յանցաւորների պատիմը և կարօտեալներու օգնութիւնը նմանասպէս կուտարէսնաֆ-պաշին, այն ժամանակներէն մնացած արժանահաւատաւ ծերերուն ասելով՝ այդ ձև կառավարութիւնը շատ կը նպաստէր արուեստներու ծաղկելուն: Վերջացաւ

էսնաֆութինը, թուլացաւ հայի աշ-  
րուեստը, դադարեցան օտարները զարմա-  
նալու և գովելու հայի ճարպիկութիւնը  
(չէպէրտութիւն) և աղքատացաւ  
Նոր - Նախիջևանի միջնակարգ ժողովուրդը  
Վայ այն ազգին ու քաղաքին, որն ըսնի  
փարթամ միջնակարգ ժողովուրդ: Միջնա-  
կարգ ժողովուրդի<sup>1)</sup> ձեռքի վաստակովն էր,  
որ շատ հազարների մող (ստակ) ներս  
կը բերուէր Նախիջևանի մէջ: Հարուստների  
գեղիս ապրուստի փողը միշտ կ'երթայ այն-

1) Առաւտորիչ եկեղեցիի ահապնա քառա-  
կուսի հրապարակը (մէյտան) շրջապատած  
էր մի ժամանակ բաղմամարդ, իսկ այժմ դա-  
տարկուած երկկարգ կրպակներով, ուր 40  
տարի առաջ կ'աշխատէին հազարաւոր արու-  
եստաւորներ, որոց ձեռագործը ոչ միայն կը  
լցնէր քաղաքացոց պիտոյքը, այլ Նախիջևա-  
նի շրջակայ քաղաքներին ու գեղերին կը հայթ-  
հայթէր զանազան պիտանի ապրանք:

տեղ, ուր կը շինուին կը սպատրաստուին  
գեղիսութեան՝ առարկաները:

Ասր - Նախիջևանը իւր հիմնարկութեան  
առաջին օրէն ունէր բաւականին հաս-  
տատուն և արդիւնաբիր առուտուր, թէւ  
այդ առուտուրը այնպէս տարածուած չէր,  
ինչպէս որ մեր օրերը: Ինչպէս որ վերը  
յիշեցինը, Քէֆէցիք հետերը բերել էին  
Ստամոլի և Անատօլուի առուտուրը. ու-  
րիշները գեռ ևս Խրիմ եղած ժամանակ-  
ները բաւականին միր առուտուր ունե-  
ցել են Դօնի խագախներու հետ, ինչպէս  
զորօրինակ՝ Մահտեսի Յարութիւն Խաթ-  
ռան - Օղուն և Նորա հետ այլ ևս վեց  
ուրիշ ընտանիք, որոնք Նախիջևանցոց  
գաղթելու միջոցին գտնուելով չին - Քիր-  
ման (Старый Чиркескъ) քաղաքը, չըն-  
կան շուպաղայի մէջ, և երբ քաղաքները  
նոցա կը ստիպէին քաղաք գրուելու, նոքա  
թողին Քիրմանը և եկան խնդրեցին նո-

րեկ Նախիջևանցիներուն, որ իրենց ևս  
բնակութեան համար տեղ տան՝ նոր - նաշ-  
խիջևանի մէջ: Բարկացած Նախիջևանցիք  
պատասխանեցին նոցա. Ո՞րտեղ էլք այսքան  
ժամանակ, թապուռ - պօդաններ, ի  
պատիժ ձեր անհոգութեանը դուք մեր  
թաղերուն. (մահաներուն) մէջ տեղ  
չունիք, զնացէք Շօռ - պազարը բնակուե-  
ցէք, որ վսելքերդ կօլօխներդ դայշ: Եւ-  
նոքա զնացին այժմուայ տեղը, այսինքն  
շուկայի հիւսիս - արևմտեան կողմը բռնե-  
ցին՝ խամիշէ (եղէզն) պատ բռնելով  
ստացած տեղերուն չորս պատութը<sup>1)</sup>:

1) Նախիջևանը ունի Բարձրագոյն հաստա-  
տուած յատակապիծ (Ալան) որով նորա թէ  
փողոցները և թէ կողմափողոցները ձգուած  
են ուղիղ գծերով արևելքէն դէպի արև-  
մուածը ընդ երկայնութիւն դօն գետին. Քա-  
ղաքը բաժանուած է հաւասար մեծութեամբ  
թաղերուէ Շուկայի և ժամերու համար թողու-

Յուսամի խօսքս չափազանցութիւն չե  
համարուիլ, եթէ ասեմ թէ Մոսկով իւր  
առուտուրի հռչակով շնորհապարտ է մեր  
հայերուն, իսկ հայերու մէջ զլիաւորա-  
պէս նոր - Նախիջևանցիներուն, որոնք իւ-  
րենց միր գործունէութենով այդպիսի մեծ  
շարժումն տուին նորա առուտուրին. բայց  
ես յատկապէս չեմ կարող ասել ո՞ր թուա-  
կանին և ի՞նչ անձինք առաջին անգամ  
տաքերը Մոսկով դրին և Մոսկովի հետ  
առուտուր բայցին, բայց հաւանական է որ  
շատ շուտ սկսեցին, վասն զի ակնարկու-  
թիւն կայ, որ Նախիջևանի հիմնարկու-  
թենէն շատ տարի չանցած, արդէն նոքա  
կը բերէին եղել է Վեհազնեալ Լաղարեանց

ցած են բաւականին ընդարձակ քառակուսի  
հրապարակներ: Թերևս այդ իսկ է պատճառը,  
որ օդը և քամին կանոնաւոր խաղալով նորա  
ուղղագիծ փողոցների մէջ, քաղաքին կուտայ  
առողջ պայման,

զործարանի մէջ պատրաստած կերպասի  
(խուժաշ) ապրանքը: Խոկ որ ինչ կը  
վերաբերի Առողջովի, Պետերուրդի և միւս  
վաճառաշահ քաղաքների հետ ծանօթ  
լինելուն, մենք այս պիտի մտաբերենք, որ  
մեր երեսփոխանները<sup>1)</sup>, որոնք գնացելէին  
Պետրոս վարդապետի հետ, հարկէ ստիշ  
պուտծ ալցելէին մայրաքաղաքներին, և  
անշուշտ, ինչպէս վաճառական մարդիկ,  
նկառած կը լինէին իրենց պէտքական ա-  
ռուտուրի հանգամանքը և նոյա որպիսու-

1) Մեր լեզուի մէջ երկու իրար նման, բայց  
իմաստով իրարէ տարբեր՝ խօսք կան, որ է  
երեսփոխան և երեցփոխ, որ միմեանց հետ  
պէտք չէ շփոթել, Երեսփոխան կը նշանակէ  
այն անձը, որ մի մարդումէ, կամ մի ընկե-  
րութենէ և կամ մի քաղաքէ ընտրուած է իրը  
հաւատարմատար, դեստա, խոկ երեցփոխ կը  
նշանակէ եկեղեցոյ արտաքին պէտքերը հո-  
գացողը:

թիւնը իրենց քաղաքակիցներուն պատմած:  
Մահտեսի Յարութիւն Խաթռան - Օղ-  
լուն, ինչպէս վեր յիշեցինք, Նախիջևան  
գաղթելն շատ տարիներ առաջ արդէն  
ձեռքը ունիցել է բաւականին ժիր առու-  
տուր, բայց նորա որդին Պօղոսը, նորա  
ժամանակակիցների և յետնորդների պատ-  
մելով, այնպիսի լայնածաւաղ առուտուր է  
ունեցել, որ ոչ նորամէն առաջ լսուած է  
եղել և ոչ նորամէն ետև մարդիկ կարո-  
ղացել են ունենալու: Աժտէրիան (Ա. ս տ ր ա-  
խան), Թայրիան (Թագանրօդ), Սիրիր,  
Անատօլու, Սոտամզօլ և շատ ուրիշ վաճա-  
ռաշահ տեղեր անդադրում կ'երթային  
նորա ապրանքները (ապրի - բարի) և կամ կը  
բերուէին այնտեղերէն: Երևելի Մըկըր  
(Մկրտիչ) Փօփօվը, Պապասինեան Պետրոսը  
և ուրիշ մարդիկ, որոնք յետին ժամա-  
նակները պատուաւոր տեղ ստացան Նա-  
խիջևանի աղան երու մէջ, Պօղոս Խաթ-

ռան - Յղլուի գործակատարներն էին: Իսկ  
երբոր, ինչպէս պատուաւոր քաղաքացի  
պէտք եղաւ Պօղոս աղային ուղարկել մայ-  
րաքաղաք Նախիջևանի կողմէն երեսիո-  
խան, և նա թէ իւր սեպհական գործերէն  
7-8 ամիս ժամանակով ստիպուած եղաւ  
հեռանալու և իւր գործի կառավարութիւնը  
յանձնեց յիշեալ Մըկը Փօփօվին: աչ-  
քարաց և բանիբուն Մըկը աղան շուտ  
հասկացաւ Պօղոս Խաթուան - Յղլուի առու-  
տուրի ճանապարհները և քանի մի ժա-  
մանակէն իւր ճեռքի չնչն փողովը հաս-  
տատեց Թայղանի մէջ կանոնաւոր քան-  
թօսա, խոշոր առուտուրը (ն օ մայձի առ-  
թիւն) իւր ճեռքը առաւ և երկար ժամա-  
նակ վայելց մէծ հարստութիւն և քա-  
զաքացւոց պատիւը: Իսկ Թայղանի մէջ  
խոշոր առուտուր բանեցնողները և երկար  
ժամանակ նորամէն մէծամեծ օգուաներ  
(Փայտա) ստացողներն էին, կ'ասեն, եր-

կու եղբարը Խօճօղուներ՝ Մարտիրոս և  
Գաբրիէլը, որոցմէ առաւել յետին ժա-  
մանակները անցաւ Յարութիւն Խաթիպովին:  
Այս համառօտ պատմութենէս կ'երևի,  
որ գաղթական հայերը : թէև թաթարի  
ու Նօղայի մէջ մօտ 400 տարի կեցած,  
այսու ամենայնիւ այնքան կոպիտ, տղէտ  
ու բան չի հասկացող մարդիկ եղած չեն  
և եւրոպական խոշոր առուտուրին անծա-  
նօթ էին: այժմուայ մեր երիտասարդները  
կը կարծեն և կ'ասեն թէ՝ մեր պապերը  
իբր թէ եղել են չնչին գնող ծախողներ,  
բայց այդ կարծիքը սաստիկ սխալական է.  
մեր պապերը շատ ու շատ հարիւր տա-  
րիներ մեզմէն առաջ Ճիշդ և պարզ գա-  
զափար ունեցել են կանոնաւոր առուտուրի  
մասին: Մէկ ժամանակ Հայաստանը մեծ  
հարստութիւն է ունեցել և այդ հարս-  
տութեան պատճառը ոչ միայն երկրի պա-  
զաբերութենէն ու ժողովրդի արուեստագի-

Առութենէն է առաջացել, այլ և նորա ժուղարդի մէկ մասի ունեցած առուտուրէն։ Հին քուղան, Արզումը, նոր քուղան և Քէֆէն զոտ հայկական առևտրական քաղաքներ էին։ Կար ժամանակ, որ գենետիկի, Ալեկու ռհայի, Ամստերդամի, Հընդկաստանի, Ստամբուլի և ուրիշ շատ վաճառաշահ քաղաքներու առուտուրը ըստ մեծի մասին հայերու ձեռքն էր։ Ուրեմն, չէ կարելի ասել թէ մեր պապերը լոկ գնող ծախողներ ու մանր խանութեալաններ էին։ Այս, մէկ բան կարող է աւելցնել սորա վրայ. այժմ փոքրիկ բացառութեամբ զրեթէ բոլոր Նախիջևանցիք վաճառականներ և խանութեալաններ են։ 40—50 տարի առաջ վաճառականների թիւը այսքան շատ չէր. բայց լաւ է արդեօք մեր օրուայ իրողութիւնը, — այդ ապացուցեց մեր օրերու կատարուած անհամար սնանկութիւնը, տնանկութիւնը,

աղքատների թիւը օրէ օր աւելանալը, հայոց ձեռքի առուտուրը ցած—ընկնելը, և, ցաւ է խոստովանելը, շատ տեղ մեր վաճառականների վարկը և բարի անունը կորչելը....

**Աստուած** տայ, երբ Նորանախիջևանի մէջ մեր վաղուցուայ ցանկացած արուեստական դպրոցին հիմքը դրուի ու նա հաստատուն ոտքի վրայ կանգնի, այն ժամանակ մեծ յօյս կայ, որ մեր քաղաքի աղքատութիւնը նորէն կը քիչանայ և նորահեա միասին անհամար խանութեալանների, խանութիւն իւր գմէ թքեարների և քաղաքիս մէջ ըրջող մաթուապ ազների թիւը կը քիչանայ և վերջապէս կ'ոչնչանայ։ Մեծ է հայի Աստուածը։ Հայը ոչ միայն երևելի վաճառական է, այլ և երևելի արուեստաոր է. ափսոս որ մենք արհամարհել ենք այս մեր ազգային արդիւնաբեր ընդունակութիւնը, և նորա բոլոր

շահը թողել ենք անզիացուն, գերմանացուն և հրէաներուն:

Որ մեր պապերը բարեպաշտ էին՝ դորամասին ամենելին երկբայել (իշքիլ ունենալ) պէտք չէ. Նախիջևանը տակաւին նորաշէն քաղաք էր, որ արդէն ունէր վեց եկեղեցի<sup>1)</sup> և մի վանք. մեր օրովը շենուեցաւ միայն մի եկեղեցի, որն շինեց ոչ Նախիջևանի ժողովուրդը, այլ մի մասնաւոր հոգեսէր այրի՝ Ակիւլինէ Ալածանեան առունով:

Մեր պապերը իրենց սեպհական ինչքը և գոյքը թողին օտարութեան մէջ, բայց

1) Նախիջևանի եկեղեցիներու անունները դոքա են. 1. Գրիգոր Լուսաւորիչ, մայր եկեղեցի, 2. Սուրբ Նիկողայոս, 3. Սուրբ Թէոդորոս (սուրբ Թորոս), 4. Սուրբ Աստուածածին, 5. Սուրբ Գէորգ և 6. Համբարձման եկեղեցի. իսկ վանքի անունն է Սուրբ Խաչ, որ քաղաքին դէպի հիւսիս վեց վերսիթ հեռի է.

իրենց ժամերու, վանկերու և մատուռներու ոչ միայն սուրբ անօթները<sup>1)</sup>, զարդերը, զգեստները, սուրբ մատեանները շալիեցին բերին, այլ և նուիրական քարերը<sup>2)</sup> մե-

1) Աւանդութիւն կայ, որ Խրիմէննախիջևան գաղթած ժամանակ Նախիջևանցիք 3—4 արկղ բերնէ բերան լցուած զանազան եկեղեցաւ ցական սպասներ, անօթներ և զարդեր բերել են, որ երկար ժամանակ կնքած մնացել է երբեմն դատարանի և երբեմն մասնաւոր մարդոց տան մէջ. Վեհափառ կաթողիկոսը 1867-ին գալով Նախիջևան, ցանկացաւ տեսնել, և նկատերով որ ոչ միայն անօգուտ մնացած են այդ սուրբ հոգութիւնը այլ և մշտական վտանգի մէջ են հրդեհի կամ մի ուրիշ պատահարի գոհ վնիւու, հրամայեց ուղարկել Եջմիածին, որ այժմ անկորուստ պահած կան այստեղի նոր բաշէն թանգարանի մէջ, որ ևս ինքս տեսայի կերպին ճանապարհորդութեան միջոցին.

2) Նախիջևանի մէջ երկու հին քարեր կային՝ մինն է Սուրբ Խաչ վանքի քարը, որ

զանի վէմերը և սուրբերի մեծ մեծ և  
ծանր պատկերներն <sup>1)</sup> անդամ չել թողու-  
ցին, բոլորը բոլորը առին և հետերը բերին:

մինչև այժմ կարելի է տեսնել այնտեղ, թէս  
վրայի խաչանշանը հաղիւ կը նշմարուի. իսկ  
երկրորդ քարը տարին Պետերբուգի կայսե-  
րական թանգարան ըստ ակնարկութեան Տիգ-  
րանեանին Երկու այդ քարերն ես Անիէն էին  
բերուած.

1) Ոչինչ կասկած չի կայ, որ Նախիջնանի  
եկեղեցու հին պատկերները մեծաւ մասսամբ խրի-  
մէն, իսկ Խրիմ Անիէն էին բերուած: Այս մա-  
սին մեր երիցփոխների աններելի տղիտութիւնը  
մեծապէս վթասելէ: Հայոց նուիրական հնու-  
թեան: Մեծ մասը այդ հին պատկերների ողնո-  
չացել, իսկ մնացածը ժամերի խցերի մէջ ան-  
հոգ ձգած են: և օրէ օր կը քայքայուին  
կ'ոչնչանան: Վերջին ճանապարհորդութեանո  
ժամանակ պ. Գարդիէլ Խատիսեանը ինձ պատ-  
մեց, որ Լեմբերդ կամ Խլվով քաղաքում կայ  
պահուած մի խկական Անիէն բերած պատ-  
կեր:

Ոչ ագահութեան, այլ խկական բարե-  
պաշտութեան նշան է այդ:

Ո՛չ սակաւ Ճանաչող էին մեր պատկերը  
նաև ուսման յարզը, որոյ ապացոյցն է այն,  
որ Նախիջնանի հասարակաց աներու հետ  
միասին ձգուեցաւ նաև Առերբ-Խաչ վանքի  
գործի և տպարանի հիմքը: Իսկ որ ինչ  
կը վերաբերի Խօնախին, նորա պատմութիւնը  
այսպէս է: Քաղաքից յատակազիծը (իլանը)  
ձգելու ժամանակ, այժմուայ շուկայի հիւ-  
սիսարեւելան կողմը թողած էր մի ահա-  
զին դատարկ (պարապ) տեղ, ուր սիտի-  
շնուրէր կամ քաղաքական դպրոց, կամ  
առաջնորդարան և կամ սոցա նման մի  
հասարակաց շինութիւն: Երբ լսուեցաւ, որ  
Եկատարինէ կայսերուհին մոադիր է Ճա-  
նապարհորդել նոր նուաճած Երկիրները,  
որոյ մէջ էր և Նախիջնանի աեղը, մեր  
պապերը հապճեպով շինեցին մի փայտա-  
շէն իջեան կամ հիւրանոց, ուր պիտի լն-

դունէին օգոստավիառ Հիւրին (միսա Վիր, առաջ առաջ առաջ) և այդ նպատակաւ շէնքի առաջ նունը դրին Խօնախ: Թէև կայսերուհին Նախիջևան չչեկառ և այն տան մէջ դօնաղ, այսինքն հիւր չեղաւ, բայց շէնքը մինչև ցայժմ կը շարունակուի Խօնախ կու չուելու: Վերջին ժամանակները նորա մէջ կը կենային եկող առաջնորդները նուիշ րականները և այլ այդպիսի պատուառոր անձինք: Խօնախի տեղն էր Խաթռան օղլուի անկիւնէն մինչև Խալիլի տունը: Վերջին ժամանակները այդ տեղի կէսը քաղաքը ծալիւ է Մարկոս աղային, իսկ մնացեալ կէսի վրայ Խաչատուր աղա Խումանչին շինելէ Մանիկէ աղայի քաղաքին կոտակած փողով այժմուայ աղեւսաշէն երկ-յարկեայ քաղաք քական վարժատունը, որ բացի քանի մի անս նշան փոփոխութիւններէ, զրեթէ նշյնն է<sup>1)</sup>:

<sup>1)</sup> Քանի մի տարի սորանից առաջ նախկին Խօնախի ստորին յարկի շտեմարանները քան-

Ուսման և զիսութեան յարգը ճանաւ չեղով, Նոր-Նախիջևանցիք 25 թուականաներուն հրաւիրեցին Սերովեէ և Գաբրիէլ Պատկաննեաններին, որ նոքա Խօնախի մէջ կրթեն Նախիջևանցի մանուկներին և դեռահաս տիրացուներին: Ոչոք չի ուրանալ այդ երկու անձանց քաղաքիս տուած բարյական օգուտները. նոյա երախտագէտ աշակերտներէն շատերը մինչև այժմ կենացնի են և քաղաքիս մէջ պատուաւոր տեղ ունին: Նալպանդեան բանաստեղծը նոցանէն մինն էր:

Նախիջևանի հիմնարկութեան օրերը քաղաքիս երև ելի աղանները սոքա էին՝ չորս

դեցին և նոյանից սենեակներ շինեցին և արևմտեան կողմէն երեք պատուհան աւելցուցին: Անա բոլոր վերանորոգութիւնը, որի համար քաղաքային զանձարանէն մախուեցաւ 13,000 ռուբլի: Այս մէկ նոր և բաւական մեծ տունի և տեղի զումար է:

եղքարք կողմէթ - 0ղլուներ, Քառաբաշ, Օտապաշ-օղլու, Մղտէսի Եղիազար Պատաշին, Մահտեսի Յարութիւն Խաթռան-օղյու, Խազէզ Կարապետ, Թումաս Խօճօղլու, Խալըպարզ Պողոս աղա, Ապրամով Մանիկ աղա (Քաղաքին փող կտակողը, ուրով շնուրեցաւ Խօնախ վարժատունը), Մառթինին Մանիկը, որ Սուրբ-Խաչի պարտէզը ընծայեց վանքին, և ուրիշները, որոց անունները, Ժամանակի սղութեան պատճառաւ, Հաւաքել չի կարողացայ:

Ուանձին ուշադրութեան և յաւիտենական շնորհակալութեան արժանի եւ Նազըրը և Նախաշը, որոնք Ալէքսանդր Առաջին կայսեր ժամանակ գնացին Պետրուրդ և այնտեղին Նախիջեան բերին Բարձրագոյն Հաստատած արտօնագիրները, և Պետրոս Պապասինը, որ մեծ երախտիք ունի, այժմուայ Լուսաւորիչ մայր եկեղեցւոյ շնութեան մէջ, որի հիմքը դրուեցած կայսերական պատճեն է և այս պատճենի մէջ առաջարկ կատարուած է Առաջարկական պատճենի մէջ:

յաւ 1807-ին և շինութիւնը աւարտուեցաւ 1814-ին:

Նախիջեանի 0դոստափառ և կայսերազն ձիւրերն էին՝ կայսր Ալէքսանդր Պաւլովիչը որ երկու անդամ այցելեց Նախիջեան. 1818-ին և ապա 1826-ին. Մեծիշխան Միխայիլ Պաւլովիչը, Մեծ իշխան և ապա կայսր Նիկոլայ Պաւլովիչը, դահաժառանդ և այժմ կայսր Ալէքսանդր Նիկոլայիվիչ և գահաժառանդ ՚ի Տէր հանդուցեալ Նիկոլայ Ալէքսանդրովիչ:

Նոր-Նախիջեանի առաջին քաղաքավագլուխն եղել է Կողմէթ-օղլուն, որ երեք անդամ ընտրուել է այդ պաշտօնի մէջ:

Նոր-Նախիջեանի պատմութիւնը թերիկը մնար, եթէ ևս մեծ երախտազիտութեամբ չյիշէի նորա մէջը գտնուած երկու բարենպատակ ընկերութեանց անունները,

որոնք զանազան ժամանակ, զանազան պարագաների մէջ և զանազան անձնինքներէ կազմուեցան։ Այդ յիշեալ ընկերութեանց առաջնին անունն է Մարդ ասիրական, իսկ երկրորդինը՝ Բարեգործական։

Մարդասիրական ընկերութեան գաղափարը յղացողը, նորան կեանք, կերպարանք ու տեղութիւն տուողն է Նպիփան Փօփօվը, որ զրելթէ իւր մանկական օրերէն ի վեր յղացել էր իւր սրտի մէջ մի ուխտ կազմել, որոյ նպատակն իսկզբան որքան և աղօտ ու անորոշ լինէր, այնու ամենայնիւնորա էացումն անարդինք չէ պիտի մնար ազգիս մանկանց մոտաւոր զարգացման համար։ Խնչպէս ասացի, այդ ընկերութեան յղութիւնը, մարմնանալը, ծնունդը, զարգացումն և պաղպաթերութիւնը բոլորովին կը պատկանի ալ. Նպիփանի անխոնջ աշխատանքին և գերմարդկային ճգին։ Միայնակ հարիւրաւոր մարդոց համոզել, պատկառ անօք յիշել այսպիսի անձին անունը։

զած սրտեր ջերմացնել, օգտաւէտ կանոնաներ մոտածել և ամբողջ կանոնադրութիւն խմբազրել և անհաւան մարդոց հաւասարացնել, ՚ի հաստատութիւն ներկայացնել Վեհափառ կաթողիկոսին, 20—25 տարի անդուլ աշխատանիքէ յետ վերջապէս ստանալ հաստատութիւն, աշակերտներ և փարժապետներ ժողովել, առաջիններին ուսումն, մնունդ, հազոււստ և անդորր ապրուստ, իսկ երկրորդներին բաւարար հասոյթ և ոռձիկ հայթհայթել, հազար ու մեկ մարդոցմէ, յընթացս տասնեակ տարիներու, արհամարհանք և ծաղրուծանակ տանել, արդարեւ պէտք է խոստովանել մանր և աննշան զործ չ՛, որոյ համար թէ մեր ժամանակակիցք և թէ գալոց սեւ բունդը պարտաւոր է պատկառ անօք յիշել այսպիսի անձին անունը։

Մարդասիրական ընկերութիւնը ունի մի դարլոց (Սուրբ-Խաչ վանքի մէջ), ուր

20—25 աղքատ հայերու որդիք կը ստա՞նան մնունդ, հազուստ, բնակարան և տարրական ուսումն: Անդամներու թիւը մօտ ի մօտոյ 200 է, իսկ անդամներու տարեկան վճարը 6 ռուբի: Ընկերութիւնը ամէն տարի իւր տարեգարձը կը տօնէ մայիս ամուռ մէջ՝ 1868 թուականէն սկսեալ:

Բարեգործական ընկերութեան սկզբնաւ որութեան պատմութիւնը այսպէս է: 1860 թ. ձմեռը սաստիկ ցուրտ լինելով շատ չքաւորներ մնացել էին անօգնական, այնպէս որ՝ եթէ մի քանի դրեթէ երես խաներ օգնութեան չի հասնէին, խեղչ չքաւորները սովամահ պիտի մեռնէին: Կոռականունով մի մարդ կուգայ Մուրատին Մանիէլին խանութը և կը պատմէ իւր ընտանիքի գառն վիճակը և կը լինդրէ արագ օգնութիւն: Երկու փոքրահասակ մանուկներ, մինը Պետրոս Քէչէջեան և միւսը Քերոս Մուրատչան իսկոյն կը շըջեն

խանութէ խանութ և ձեռքերը բռնած թաշկինակի մէջ փող կը ժողովն, որու գումարը այն օր կը հասնի 12 ռ.: Սի մասը, այսինքն քանի մի ռուբի կուտան չքաւորին, իսկ մնացածը կը պահեն ու րիշ կարօտեալների համար: Այդ գծոցին կը պատահի նոցա հանգուցեալ Պօղոս քահանայ ԽոՃեանը, որ խորհուրդ կուտայ նոցա, փոխանակ ամէն անգամ դռնէ գուռն մուրալով՝ մի հաստատոն ընկերութիւն կաղմել տարեկան չափաւոր տուրպ քով, տարեկան 3 մանէթով: Յիշեալ երակու տղայք կը լսեն բարի քահանայի խօսքը և իսկոյն ցուցակ կը շինեն և նորից կը մանաշեն խանութէ խանութ և կը ժողովն արդէն նշ փող, այլ անդամներ: Վերջին ժամանակները չքաւականանալով անդամական 3 մանէթով, հասցրին նորաքանակը 5 ռուբիի: Երբոր Ստեփաննոս Նաղարեանցը գրեց այդ ընկերութեան կա-

նոնադրութիւնը և Տէրութիւնը հաստատեց այն, այնուհետեւ բարեգործական ընկերութիւնը լայնացուց իւր ասպարէզը և նորա հռչակը աւելի և աւելի սկսաւ ծառալըլու աղջիս մէջ: Բայց ափսոս որ այս օգտաւէտ ընկերութիւնը առ այժմն չունի մի որոշ նպատակ, այլ իւր բարեգործութիւնքը կը բաժանէ աջ ու ձախ, երբեմն Նախիջևանի մէջ, երբեմն Նախիջևանէն դուրս կրթելով իւր սանիկները, երբեմն զրբեր տակելով, երբեմն չքաւորներին հաց ու հագուստ տալով և շատ այսպիսի բարիք գործելով: Ո՞վ իրաւունք ունի ասել, որ բարեգործութիւնը անպտուղ բան է. բայց այն ևս սուտ չէ, որ կարդ ու կանոնը գործի հոգին է. չի կայ կարդ կանոն՝ չի կայ և հոգի ու գործը մեռած է: Երանի թէ բարեգործական ընկերութեան անդամները հասկանային, որ եթէ մի բարեկարդ հաստատութիւն, զոր օրի-

նակ՝ «Օրիորդաց արուեստական» դպրոց հիմնէին, նոցա ընկերութեան արդիւնաբերութիւնը րիւրապատիկ աւելի կը լինէր: Բայց ես այս խօսքերս ոչ իբրև խրաս ասեմ նոցա (Աստուած հեռի անէ ինձ այդպիսի լըբութենէ), այլ իբրև կարծիք:

---

Այս է Նոր Նախիջևանի համառօտպատմութիւնը:

՚Ի հարկ է, մենք Նախիջևանցիքս չենք կարող պարձենալ, որ այս հարիւր տարուայ միջոցին այսպիսի մեծագործութիւններ արինք, որով կը շահնենք մարդոց աչքերը և նոցա ծափահարութիւնը կը զրգուենք: Ո՞չ այդ սխրագործութիւնները անելու մենք ոչ ոյժ ունեինք և ոչ հնարինչակէս կարելի էր սպասել մի խեղճ աստանդական զալթականներէ, որոց օրական հացը անդամ ապահոված չէր, որոնք

թողել էին իրենց ինչքը ու հարստութիւնը և եկել բնակուել էին մի ամպի անմարդաբնակ տեղ, շրջապատած վայրենի թաթարներէ, նօղայներէ ու կիսավայրենի քաղաքներէ, և այդ մանաւանդ այնպիսի մարդոցմէ, որոնք 400 տարուայ տաժանական ստրկութիւն քաշել են թաթար ազգի ձեռք, երբ ոչ աշխատանքը և ոչ ընտանեկան սրբութիւնը ապահով եղած չէ մահմէդական իշխաններէն և նոցա բարբարոս հպատակներէն:

Այսպիսի անյաջող պայմանների մէջ նաև այն մեծ քաջագործութիւն է, որ մենք, Նոր-Նախիջևանցիքս, կարողացել ենք մաքուր պահպանել մեր սուրբ եկեղեցին<sup>1)</sup>,

1) Նկատելի բան է, որ Նախիջևանի մէջ յայտնուած չէ ոչ աղանդ, ոչ հաւատափոխութիւն և ոչ այնպիսի կրօնական շարժմունք, որ կարող լինէր գայթակղեցնել ժողովրդի հաւատը և ազգի անդամներուն բաժանէր Աջմիածնաց սուրբ ծոցէն:

և մեր հայկական լեզուն<sup>2)</sup>), մեր պապենական փրկաւէտ աւանդութիւնները, հարիւր տարի մնացել ենք հայ և այսօրուայ օրս մեր զաւակներին պահպանեցինք հայ և դաստիարակեցինք հայ: Թող պարծենան մեր որդիք և թռուունք, եթէ հարիւր տարի անցնելէն յետ կարողանան նոյնը ասելու իրենց զաւակներին, ինչ որ այսօր կը լսեն մեր բերնէն:

2) Մի քանի ժամանակ թէն տգէտները կը ծիծաղէին Նախիջևանի տեղական բարբառի վերայ, բայց լեզուազիտական զննութիւնները ապացուցին, որ Նախիջևանի բարբառը, մի քանի աննշան փոփոխութեամբ, գրեթէ նոյնն է, որով կը խօսէին Նիրակ գաւառի հայերը և որն, թերևս, ամէնօրուայ գործածական լեզուն է մեր բազրատունեան ցեղի թագաւորներուն և թագաւորանիստ Անի մայրաքաղաքի բնակիչներուն: Այժմուայ Ղարսի, Աէքսանդրապօլի ու Նոր-Նախիջևանի բարբառներու մէջ մեծ զանազանութիւն չի կայ:

Առ-նախիջևանը, որ իւր պատուական  
որդիներով ու գուստիներով կեցաւ հա-  
րիւր տարի ողջ, առողջ, և զուարժ,  
կեցցէ ուրեմն նա այլ ևս շատ ուրիշ  
հարիւր տարիներ:

Վ. Ե Բ Զ



Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Ր

I.

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Աշխատասիրութիւն

Գ. Ա. Մ Ա. Ռ — Ք Ա. Թ Ի Պ Ա. Ց Ի

Այս օրեր լցու տեսաւ և վաճառում է  
կենտրօնական Գրավաճառանոցում:

|                    |             |    |      |
|--------------------|-------------|----|------|
| կազմուած           | և նօտաներով | 25 | կոպ. |
| Նոյնը առանց կազմի. | 15          | դ  |      |

II.

Φ Θ Ρ Ζ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ  
ՄԻԱՅՄԱՆԱՅ ՀԱՆԴԻՇ

1880 թ.

(ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

ՉՈՐՐՈՐԴ շրջանի մէջ ևս «ՓՈՐՁԸ»  
հրատարակումէ միևնույն հոգւով և ուղղու-  
թեամբ և նոյն ծրագրի համեմատ ինչպէս  
և առաջին երեք տարիները:

Հանդէսը լոյս է տեսնում ԱՄՄԵ:  
Խրաբանչեւր համարի տպագրական

թերթերի թիւը լինելու է 12-ից մինչև  
15: Ամրող տարին կազմումէ չորս մե-  
ծաղիր հատոր՝ ամէն մէկը աւելի քան  
600-700 երեսից բաղկացած:

«ՓՈՐՁԻ» բաժանորդակինը ամենայն տեղ  
ՏԱՍԸ ՌՈՒԲԼԻ է:

Հոգեորականները՝ կոնսիստօրիայի միջ-  
նորդութեամբ, իսկ ուսումնարանները և  
ուսուցիչները թեմական վերատեսչի պա-  
տասխանատուութեամբ կարող են մաս առ-  
մաս վճարել այն է՝

Սորորագրելու ժամանակ — 4 ռուբլի,  
մայիսի 1-ին — 3 ռուբլի և սեպտեմբերի  
1-ին - 3 ռուբլի:

Այն անձինք, որոնք միանուաղ չեն  
կարող վճարել բաժանորդագինը, դիմում  
են իւրեանց պայմաններով խմբագրին:

Սորորագրութիւն կարելի է Տիվիսումը՝  
«ՓՈՐՁԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆՅ, և ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ  
ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ, Կ. Պօլսում՝ դիմել

**Մեծ.** Պետրոս Էջմ. ՎԱՍԻԼԵԱՆԻՆ. Ղալաւ  
թիա, Կէօչէ օղլու խան, մաքսատան դիւ  
մաց: Զմիւռնիայում՝ գեր. Մելքիսեդեկ  
եպիսկոպոս ՄՈՒՐԱԴԵԱՆԻՆ, իսկ Ասիական  
Տաճկաստանում՝ մեծ և ՄՈՒՐԱԴԵԱՆԻՆ  
Ամանօն:

18<sup>76</sup>/<sub>77</sub>, 18<sup>77</sup>/<sub>78</sub> և 1879 թ. «Փորձը»  
կարելի է ստանալ Խմբագրատան մէջ՝ իւ-  
րաքանչիւր շըջանի համար 10 ռուբլի հա-  
տուցանելով:

«Առ բաժանորդները առաջին փոստայով  
ստանում են բոլոր լոյս տեսած համար-  
ները»:

**Մեր հասցէն.** — Тифлисъ. Въ Редак-  
цію Армянского Журнала „ПОРДЗЪ“.  
իսկ արտասահմանից — Tiflis. Redaction  
du Journal Arménien „PORDZ“,

ԽՄԲԱԴԻՐ - ՀՐԱՏԱՐԱԿԻՉ  
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

4846

Գիննէ 50 4.

0000867

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0000861

